ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

9 հոկտեմբերի 2025 թվականի N 1429 - Ա

ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԵՏ ՎԵՐՑՆԵԼՈՒ
ԵՎ ԱՄՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ և 7-րդ մասերը, 9-րդ հոդվածի 5-րդ մասը, «Պետական գույքի կառավարման մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության սեփականություն հանդիսացող, Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարությանը ամրացված՝ 497,314,974 ՀՀ դրամ սկզբնական արժեքով տրանսպորտային միջոցները (այսուհետ՝ տրանսպորտային միջոցներ) հետ վերցնել և ամրացնել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեին (այսուհետ՝ կոմիտե)՝ համաձայն հավելվածի:

2. Կոմիտեի նախագահին՝

1) Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարի հետ համատեղ՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո վեցամսյա ժամկետում իրականացնել

սույն որոշման հավելվածում նշված տրանսպորտային միջոցների հանձնման-ընդունման աշխատանքները.

2) սույն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետում նշված աշխատանքների ավարտից հետո եռամսյա ժամկետում իրականացնել տրանսպորտային միջոցների իրավունքի պետական գրանցման աշխատանքները՝ նախատեսելով, որ պետական գրանցման ծախսերն իրականացվելու են Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության միջոցների հաշվին:

3. Սահմանել, որ սույն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետում նշված աշխատանքների կատարման նպատակով՝ սույն որոշման հավելվածում ներառված տրանսպորտային միջոցները ենթակա են տեղափոխման կոմիտեի պետական շարժական գույքի պահառության նպատակով հատկացված՝ Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա, Հաղթանակ 2 փող. 79 հասցեում գտնվող պահառության վայր՝ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության միջոցների հաշվին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

09.10.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ